ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-828-29.12.2020-ՊԻ-011/0 և Պ-828[1]-29.12.2020-ՊԻ-011/0)

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	««Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված	Օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «5) կարճվում են գույքային բռնագանձումներով և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որոնք չեն ազդում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ դեպքերի»	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	««Սնանկության	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը հանել	Ընդունվել է	Ընդունվել է

		մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված			
3.	Կառավարություն	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը հանել	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	«Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ «5) կարճվում է պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որոնք չեն ազդում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ դեպքերի» :	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախածի 1-ին հոդված	Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետում լրացված նոր պարբերությունը փոփոխել հետևյալ կերպ. «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված կատարողական վարույթները սույն կետի հիմքով կասեցման ենթակա չեն:»	Ընդունվել է	Ընդունվել է

6.	Կառավարություն	««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում լրացված նոր պարբերությունը փոփոխել հետևյալ կերպ. «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված կատարողական վարույթները սույն կետի հիմքով կասեցման ենթակա չեն:»	Ընդունվել է	Ընդունվել է